Արձանագրություն N 4

«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ կարիքների համար ուլտրաձայնային ախտորոշման սարքի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» «Հուլիսի» 2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Բաբայան
Հանձնաժողովի անդամներ Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Հ.Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 17.06.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի հունիսի 30-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի հուլիսի 1-ին ժամը 14:00-ին: 2025 թվականի հուլիսի 2-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ	armedtechnicallc@gmail.com	02604367
4	«Դիավանտ» ՍՊԸ	lawyer@diavant.am	00255375
5	«Saruman_the_white» LLC		976431

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա է շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը 03.07.2025թ. որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակցին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ

համակարգի միջոցով 03.07.2025թ. ծանուցել է մասնակցին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումը.

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ չափաբաժնի մասով առաջարկած ապրանքի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Սահմանված ժամկետում շտկումը կատարված է եղել և 07.07.2025թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էր մասնակցի կողմից ներկայացված պահանջված շտկումները: Գնահատող հանձնաժողովը գնահատելով մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթուղթը արձանագրել է, որ ներկայացված շտկումները կատարված են ամբողջովին և ապրանքի ամբողջական նկարագրի՝ տեխնիկական բնութագրի ներկայացված շտկված տարբերակը համապատասխանում է հրավերի պահանջներին: Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը՝

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Բաբայան)

01.07.2025թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ ստացվել են հետևյալ հարցումները, որոնց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան տրամադրվել են հետևյալ պարզաբանումները.

Հարցում 1-ին՝ ներկայացվել է 23.06.2025թ.

«Հարգելի գործընկեր, Համաձայն ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին մասի 3-րդ բաժնի Ձեզ ենք ներկայացնում պարզաբանման հարցում. Նշված գնման ընթացակարգի հրավերի 5-րդ հավելվածում՝ պայմանագրի նախագծում, տեխնիկական բնութագրում նշված է «Մասնագիտացված ծրագիր ծավալային նավիգացիայի (Fusion Imaging, Smart Fusion, PercuNav) համար», այնուհետև ներկայացված է ֆունկցիոնալ պահանջներ: Ծավալային և այլ պատկերավորման աղբյուրներով ստացված պատկերներով նավիգացիան (այսպես կոչված, Fusion-ը) տարբեր արտադրողների մոտ ունի տարբեր անվանումներ և նույնիսկ տարբեր ֆունկցիոնալ հնարավորություններ: Ընդհանուր առմամբ, բոլոր արտադրողների մոտ վերջնանպատակը տարբեր մոդալությունների (ՄՌՏ, ՀՏ և այլն) պատկերներով համադրելի նավիգացիան է: Ձեր կողմից տեխնիկական բնութագրում նշված PercuNav-ը, Smart Fusion-ը և Fusion Imaging-ը տարբեր արտադրողների նավիգացիայի ծրագրերի անվանումներն են: Այս անվանումները մակնշելու դեպքում պարտադիր պիտի կատարվի «կամ համարժեք» նշումը կամ էլ ուղղակի պիտի նկարագրվի անհրաժեշտ ծավալային նավիգացիայի ֆունկցիան: Խնդրում ենք կատարել համապատասխան փոփոխությունը հրավերում: Հարգանքով՝ «Ար.մեդտեխնիկա» ՍՊԸ տնօրեն Նունե Անդրեասյան:»

Պարզաբանում 1՝ տրամադրվել է 23.06.2025թ.

«Հարգելի մասնակից,

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի «Մասնագիտացված ծրագիր ծավալային նավիգացիայի (Fusion Imaging, Smart Fusion, PercuNav) համար» դրույթով պահանջվել է «Fusion Imaging» ֆունկցիայի առկայություն:

Այդ ֆունկցիան տարբեր արտադրողների մոտ ունի տարբեր անվանումներ, օրինակ՝ GE Healthcare-ն անվանում է Volume Navigation, Siemens-ը՝ eSie Fusion, Philips-ը՝ PercuNav կամ SmartFusion, Canon (Toshiba)-ը՝ SmartFusion, Mindray-ը՝ iFusion with Resp Compensation և այլն:

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագի նշված դրույթում փակագծերում նշված են պահանջվող ֆունկցիայի անվանումների օրինակներից մի քանիսը այլ ոչ թե հնարավոր բոլոր տարբերակները:

ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45 ծածկագրով մրցույթի հնարավոր բոլոր մասնակիցները կարող են ներկայացնել «Fusion Imaging» ֆունկցիայի առկայությամբ մրցույթային տեխնիկական բնութագրին համապատասխանող ուլտրաձայնային սարքավորումներ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ֆունկցիան արտադրողի կողմից ինչ անվանում ունի:»

Հարցում 2՝ ներկայացվել է 24.06.2025թ.

«Հարգելի՛ գնահատող հանձնաժողով «Գնումների մասին» օրենքի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Նշված բնութագրերը պետք է նաև ապահովեն հավասար մրցակցային պայմաններ և չառաջացնեն անարդարացի խոչընդոտներ գնումների գործընթացում, ինչպես նաև լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք՝ գնումն իրականացնելու անհրաժեշտությանը: Նկատի ունենալով վերոշարադրյալը՝ խնդրում ենք տրամադրել պաշտոնական պարզաբանում, առ այն, թե արդյո՞ք գոյություն ունի որևէ ընկերության, որի արտադրած համապատասխան բուժսարքավորումը

համապատասխանում է հետևյալ տեխնիկական պարամետրերին. Դինամիկ տիրույթ՝ ոչ պակաս, քան 342 դԲ Մասնագիտացված ծրագիր՝ կադր/վայրկյան հաճախականության հասնելու համար ոչ պակաս քան 2089 Մեր ունեցած ինչպես մասնագիտական, այնպես էլ գործնական և կիրառական տեղեկատվությամբ, ներկայումս հայտնի չէ որևէ ստացիոնար ուլտրաձայնային համակարգ՝ համալրված 4 սենսորով և տպիչով, որը բավարարում է նշված ցուցանիշներին: Հետևաբար, խնդրում ենք ներկայացնել Ձեր պաշտոնական դիրքորոշումը՝ վերոնշյալ տեխնիկական պահանջների օբյեկտիվ հիմնավորվածության և արդար մրցակցության սկզբունքներին համապատասխանության վերաբերյալ: Միգուցե նշված չափորոշիչնեչում առկա է տեխնիկական վրիպակ:»

Պարզաբանում 2՝ տրամադրվել է 26.06.2025թ.

«Հարգելի գործընկեր:

Տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ստացիոնար ուլտրաձայնային սարքավորումներ արտադրվում են մեկից ավելի արտադրողների կողմից:»

Հարցում 3՝ ներկայացվել է 24.06.2025թ.

«Հարգելի՛ գնահատող հանձնաժողով «Գնումների մասին» օրենքի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Նշված բնութագրերը պետք է նաև ապահովեն հավասար մրցակցային պայմաններ և չառաջացնեն անարդարացի խոչընդոտներ գնումների գործընթացում, ինչպես նաև լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք՝ գնումն իրականացնելու անհրաժեշտությանը: Նկատի ունենալով վերոշարադրյալը՝ խնդրում ենք տրամադրել պաշտոնական պարզաբանում, առ այն, թե արդյո՞ք գոյություն ունի որևէ ընկերության, որի արտադրած համապատասխան բուժսարքավորումը համապատասխանում է հետևյալ տեխնիկական պարամետրերին. Դինամիկ տիրույթ՝ ոչ պակաս, քան 342 դԲ Մասնագիտացված ծրագիր՝ կադր/վայրկյան հաճախականության հասնելու համար ոչ պակաս քան 2089 Մեր ունեցած ինչպես մասնագիտական, այնպես էլ գործնական և կիրառական տեղեկատվությամբ, ներկայումս հայտնի չէ որևէ ստացիոնար ուլտրաձայնային համակարգ՝ համալրված 4 սենսորով և տպիչով, որը բավարարում է նշված ցուցանիշներին: Հետևաբար, խնդրում ենք ներկայացնել Ձեր պաշտոնական դիրքորոշումը՝ վերոնշյալ տեխնիկական պահանջների օբյեկտիվ հիմնավորվածության և արդար մրցակցության սկզբունքներին համապատասխանության վերաբերյալ: Միգուցե նշված չափորոշիչնեչում առկա է տեխնիկական վրիպակ:»

Պարզաբանում 3՝ տրամադրվել է 26.06.2025թ.

«Հարգելի գործընկեր:

Տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ստացիոնար ուլտրաձայնային սարքավորումներ արտադրվում են մեկից ավելի արտադրողների կողմից»

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝

- «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն՝ 60,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Մերժել «Դիավանտ» ՍՊԸ-ի և «Saruman_the_white» LLC հայտերը՝ ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման գները՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ և 3-րդ մասերի:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 24.07.2025թ.-ից մինչև 25.07.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաբայան

Անդամներ՝ ---------- Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

---------- Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2025 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք
ուլտրաձայնային սարքի վերաբերյալ վերջնական գներով
01.07.25թ. կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ					«Դիավանտ» ՍՊԸ					«Saruman_the_white»LLC				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	1	60,000,000	60,000,000	60,000,000	0	60,000,000	60,000,000	60,000,000	97,000,000	0	97,000,000	97,000,000	97,000,000	100,000,000.00	0.00	100,000,000	100,000,000	100,000,000